ԱՐԱՄ ՍԵՐԳԵՅԻ ՍԱՅԻՅԱՆ

Ծննդյան տարեթիվ 20.04.1977

Ծննդավայր ք. Ստեփանակերտ

Պատմական գիտությունների թեկնածու **Արամ Սերգեյի Սայիյանը** 1994 թ. Նոր Հաճնի N 3 միջն. դպրոցն ավարտելուց հետո 1995-1997 թթ. ծառայել է ՀՀ Զինված Ուժերում:

1998-2002 թթ. ուսումնառել է ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի Թուրքագիտության բաժնի բակալավրիատում:

2002-2003 դասավանդել է Նոր Հաճնի թիվ 2 դպրոցում որպես ՆԶՊ ուսուցիչ:

2004-2006 թթ. ուսումնառել է ԵՊՀ Պատմության ֆակուլտետի Համաշխարհային պատմության բաժնի մագիստրատուրան:

2007-2012 թթ. հանդիսացել է նույն ամբիոնի հայցորդը:

2007-2008 թթ. որպես պայմանագրային ծառայության է անցել ՀՀ ԶՈՒ:

2015 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Քրդերի հակաթուրքական պայքարը Թուրքիայում և տարածաշրջանային զարգացումներն Արարատի ապստամբության ընթացքում (1926-1930 թթ.)» թեմայով:

2015-2017 թթ. որպես պայմանագրային ծառայության է անցել ՀՀ ԶՈՒ:

2017 թ. առ այսօր աշխատում է ՀՀ ԳԱԱ Պատմ. ինստիտուտի Ընդհանուր բաժնում որպես գիտաշխատող:

2021-2025 աշխատել է Գլաձոր համալսարանում:

2022 թ. առ այսօր դասախոսում է Հայ-ռուսական համալսարանում:

2023 թ. առ այսօր ծառայում է ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ում որպես գիտնական-վերլուծաբան:

2020 թ. մասնակցել է 44 օրյա պատերազմին:

Հեղինակ է 3 մենագրությունների և երկու տասնյակից ավել գիտական հոդվածների:

- Գիտական զեկուցումներով, դասախոսություններով ու ելույթներով հանդես է եկել հանրապետական և միջազգային մի քանի տասնյակ գիտաժողովներում, գիտագործնական սեմինարներում, Հայկական բանակի զորամասերում, միջնակարգ և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում: Մասնակցել է նաև պատմագիտության ու կրթության հարցերին նվիրված հեռուստահաղորդումների և ռադիոհաղորդումների: